

դէն ընդունված է և ամենայն կերպով իրազարծելում է քաղաքակրթված երկրներում անհամար արուեստագիտական և գիւղատնտեսական ուսումնարանների հիմնարկութեամբ: Մեզ համար այս խնդիրը աւելի մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ մեր հասարակական կեանքը դեռ գտնվում է մեռած դրութեան մէջ. ուսումնարանը պէտք է նրան վերածնել, վերակենդանացնել, ուստի հարկաւոր է մեր ուսումնարանին տալ արուեստագիտական տեխնիկական ուղղութիւն որպէս զի նա ստեղծելու արհեստաւորներ: Ն հարկ է ինձ կը պատասխանել թէ մեր ուսումնարանների նիւթական միջոցները չեն ներում այսպիսի ձեռնարկութիւններ անելու, այո, այս միջոցները շատ չնչին են գանազան մեքենաներով գործարաններ և արհեստանոցներ բացելու, բայց նրանք շատ բաւական են այնպիսի արհեստանոցներ ունենալու ուսումնարանին կից, ինչպէս են մեր պիտոյքները լցնող կոշիկակարի, դեղաբերի, հիւսնի և այլ արհեստանոցները: Անաքի մէջ այս արհեստները սովորու համար հարկաւոր է 5—6—7 և էլ աւելի տարիներ. աշակերտը այս ժամանակի ընթացքում իր վարպետի ստրուկն է, նրա աշխատանքը ամենարդար կերպով հարստահարում է վարպետը, մի և նոյն ժամանակ պատրաստում է նրանից իր նման հարստահարող արհեստաւոր: Տեխնիկական կրթութեան սահմանները շատ լայն են, բայց բաւական է փորձից սկսել գործը, և ես հաւատացած եմ, որ նա շատ զեղեցիկ կերպով կարող է ընթանալ, եթէ մեր ուսումնարաններում ամբողջովին մեր նոր ուժերը: Յանկալի էր լսել մեր մանկավարժների կարծիքը այս առթիւ, թէ պէտք է ձգտելու ասած, նրանցից ջիւ բան կարելի է սպասել, որովհետեւ նրանք նոյն մանկավարժական հարցերից չեն կարողանում բարձրանալ, նրանց համար տնտեսական հարցերը հետաքրքրելի չեն, իսկ եթէ մեր մանկավարժները լսեն, զո՞նք լրագրութիւնը չը պէտք է լռել. նա արդէն խօսում է կանանց պրոֆեսիոնական կրթութեան մասին, ուրումն և պարտաւոր է խօսելու արական արհեստագիտական կրթութեան մասին էլ:

Մտակալ Ե. Արեւելանց

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐԱՊԱՍԻՑ

4 փետրվարի

Հազիւ թէ մեր հայերի մէջ գտնվի բարոյականապէս յետ ընկած այնպիսի մի հասարակութիւն, ինչպէս է վաղարշապատի հասարակութիւնը. վաղարշապատցիներ երբէք չէ նեւաբարբրում հասարակական գործով. վաղարշապատցիներ երբէք չէ մտածում ընդհանուրին վերաբերած գործի համար, իր անձնականից դուրս նա ոչինչ չէ ընդունում: Ասածիս թող վկայ լինեն այս զիւրի երկսեռ դպրոցների աննախանձութիւնը և ուրիշ բաներ, որոց թուում է այն որ «Արարատեան» ընկերութեան համար ամեն տեղ նուիրատուութիւններ եղան, իսկ վաղարշապատցիներ գուցէ այդ ընկերութեան մասին տեղեկութիւն չունին: Օրինակներ շատ կան, բայց նորանց այժմ առաջ բերելը ինձ նեւու կը տանի նամակիս ներկայ նպատակից, ուրեմն նորանց մասին մի ուրիշ ժամանակ: Եթէ պատահում է, որ մէկը մի որ և է հարց է առաջարկում հասարակութեան օգտին, վաղարշապատցիներ, ըստ երևութիւն տալիս է իր հաւանութիւնը, մինչև անգամ այդպիսի մի հարց առաջարկողին հասարակութեան բարեբար է անուանում, սակայն եկաւ յարմար րօպէն, նա իսկոյն վաղում է վաճար, իր հարց ստորի կամ սրբազանիս մօտ *) մէկին երկու աւելացնելով, առաջարկած հարցին բոլորովին թիւր մեկնութիւն տալով, այդ հարց առաջարկողին, որին հասարակութեան բարեբար էր կոչել, խառնարար և վանքի շահերին դաւաճան ներկայացնելով, որոգայթ է լարում նրա դէմ: Այս զիւրի հասարակութեան առաջարկէմ դատ կազմողները, մի երկու վաշխառու հարուստների նեւ միասին, տեղացի չինով:

* Ամեն վաղարշապատցի ունի իր հայր սուրբը կամ սրբազանը.

նիկներն են, որոնք բոլորն էլ սինոզի ծառայողներ են: Սոցանից ոչ մէկը, բացի ատենադպրոցի, որ, կարծեմ, այստեղացի չէ, չը գիտէ պետական լեզուն, հայերէնից էլ, պէտք է խոստովանած, բարիկ են, այնպէս որ նրանք բոլորն էլ սինոզից դուրս ոչինչ պարագայում չեն կարող ունենալ: Այս սինոզը կատարեալ անկրթաց է այդ պարտնների համար. ուրիշ կերպ էլ լինել չէ կարող, քանի որ պետական գանձարանից սինոզին յատկացրած ուժերը շատ աննշան է և սինոզը վաճարական եկամտից ոչինչ չէ նշանակում. այն ինչ այդ միջոցով աւելի գրադէտ մարդիկ կարելի էր հրաւիրել օտար քաղաքներից, բայց և դարձեալ նեւանում եմ իմ բուն նպատակից: Այդ չինովիսիկ ազաները, իրանց շատ նեւու պահում հասարակ ժողովրդի շրջանից, նորա դիմապիական բարձրութիւնից են նալում հասարակ ժողովրդի վրա, նորա չեն ցանկանում հասարակական գործերում առաջնորդել ժողովուրդը, նորա լայաղ չեն անում մինչև անգամ գործ ունենալ տեղեւ ամբողջի նեւ, ինչպէս նորանք ասում են, գուցէ այդպէս պահանջում են նրանց շահերը: *) Սակայն վերջին երեւում մի խլրտում, մի չարձեւում նկատելի եղան վաղարշապատի հասարակութեան մէջ: Վերջապէս ներկայ հանգամանքները, կարծես, ներդրածցին վաղարշապատի մեռած հասարակութեան վրա և յանկարծ վաղարշապատցի ժողով ժողովի վրա են կազմում, ժողովրդի աղքատ դասը ցրտամահից և սովամահից փրկելու մի հնար գտնելու համար: Գուցէ տեղի ունեցած մի երկու դժբաղդ պատահումներ աղքեց վաղարշապատցի ազաների խղճին: *) Թէ այսպէս և թէ այնպէս ժողովներ եղան և լինում են: Ես սկզբում կարծեցի, թէ այդ չարձեւում, այդ խորովները լինում են տիրացու չինովիսիկների ինքնախուժ, սակայն նեւամուտ լինելով ժողովներին, հարցու փորձ անելով սորան նորան, տեղեկացայ նեւու եւալը: Մեր վեհապառ Հայրը, որ սկզբում կարելի էր համարում այդպիսի մի բերել և առատ երկրում հացի չափազանց թանգութեան և մինչև անգամ սովի յայտնվելը, հաստատապէս տեղեկանալով որ իր ժողովուրդը հացի կարթութիւն ունի, որ վաղարշապատում շատ ընտանիքի սոված է և պատւում, հայրաբար կ'ընթաց նրանց վրա և հրատեղել բարեհաճեց մօտ 65 ընտանիք, որոնց թուում է գաղթական Աշակերտցիներ կերակրել բոլորովին ձեր միաբանութեան սեղանից մինչև նոր հունձը և ամեն ամիս դարձեալ մինչև նոր հունձը վանքական շտեմարանից տալ վաղարշապատի հասարակական հացթուխ եղիպարեանին ցորեն փոխարինաբար յայտնի գրասկանով և այն պայմանով, որ թիւում հացը չքաւորներին ծախի ֆունտը 5 կոպէկով, իսկ միւսներին այս լիւրիայի գնահատութեան համաձայն. և իր այս վերջին կարգադրութիւնը արգարութեամբ կատարելու համար հացթուխի կողմից Նորին (Ստոլիւնը) հրամայեց հասարակական ժողով կազմել և հոգաբարձուներ ընտրել հացթուխի վրա հսկելու համար: Այժմ հակմանայի է թէ վաղարշապատցիներն են պարտական այս ժողովների կազմելով: Այս ժողովներում, որոնց երկուսին նախագահում էր պ. Գաւառապետը, հասարակութիւնը վճեց ֆունտը 5 կոպէկով հաց տալ միայն 100 ընտանիքի, որոնց անունական ցուցակը յանձնեց հացթուխ եղիպարեանին, վճելով ամեն մէկին օրական տալու հացի քանակութիւնը, և 25—30 տան հաց տալ ժողովրդից ընտրած հոգաբարձուների տոմսակներով ֆունտը 3 կոպէկով, այդ փորձը ստանալով հոգաբարձուներից ամեն ամիս և այդ գումարը լրացնելու համար նուիրատուութիւն ժողովը: Այս վերջին նպատակի համար պ. գաւառապետից վաւերացված գումարը յանձնեց հոգաբարձուներին: Հոգաբարձուները բոլորն էլ բարեխիղճ մարդիկ են, եթէ միայն չուտով չը ձանձրանան նուիրատուութիւն ժողովուրդը, որ բաւականին մեծ տանջանք է այնպիսի հասարակութեան մէջ, ինչպէս վաղարշապատին է:

*) Համարութիւնը պահանջում է խոստովանել, որ պ. ֆ. Կաւառապետը, որ սինոզում գործակալի պաշտօն ունի, բացառութիւն է կազմում, այդ էլ խախտեան ուսումնարանի շնորհն է:

*) Լուր է տարածվել, որ անցնալ յունիվարսիտի ընթացքում երեք նորամիջներ ցրտից սառել են, մէկը ծնվելուց անմիջապէս կէս ժամ յետոյ, իսկ միւս երկուսը եկեղեցու ճանապարհին մկրտել տանելու ժամանակ: Այս լուրը հաստատվում է և ասում են որ տեղացի քահանայք չեն համաձայնում տներում կատարել երկխայոց մկրտութեան խորհուրդը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 փետրվարի

Կարգալով վանքի սովատանջ հայերի ցաւայի դրութեան նկարագրելը, որը ամեն մի հայի աչքերը արեան արտասուքով է լցնում և որը չէ կարող արձագանք չը գտնել ամեն մի հայի սրտում, թէ և նա լինէր մինչև անգամ անզգայ մի մարդ, ուստի աչքի առաջ ունենալով և զգալով այն սարսափելի դրութիւնը և տանջանքը որը կրում են մեր վանի եղբայրները և քրոյրերը, մենք մեր կողմից կամենում ենք մէկ խոհմտ օրինակ լինել մեր հայ արհեստաւորներին,—(սորանով մենք չենք ուզում պարծենալ), նոցա բարի նախանձը գրգռելով դէպի օգտաւէտ գործը:

Մենք ջերմ սրտով նուիրում ենք մեր զուտ արդիւնքի 50% յօգուտ վանի սովատանջների, իւրաքանչիւր ամիս սկսված ամիս 1-ից մինչև առաջիկայ հունձը: Մենք մեզ խրախուսում ենք այն յոյսով, որ մեր յարգելի տիրնայք և օրհորդները անտես չեն աւելի մեզ իւրեանց հանդերձեղէնների պատուէրները տալ, որով միջոց կը տային մեզ աւելի նշանաւոր գումար արտադրել յօգուտ սովատանջների դրամարկով: Պատուէրները ընդունում ենք բաւական արժան գնով, մեր կար ունեց պատուիրողները նոյնպէս միշտ գոհ են մընում: Պատուիրել ցանկացողները թող բարեհաճեն զիմե վանուսկի փողոց, դերձակ Գրիգոր և դերձակուհի Շուշանիկ (Սանդուխտ) Անեանի խանութը, պոլկովիկ Շախնազարովի նոր շինութեան մէջ:

Գրիգոր Անեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Փորձ» ամսագրի խմբագրութիւնը խնդրում է մեզ յայտնել որ բացի պ. Սանաբանցից ստացած 1500 ր. գումարից, դարձեալ ստացվի նախագրութեան մէջ յօգուտ վանի սովատանջների հետեւալ նուէրները: Խլխան Ամատուհու Արուեստաւորների կուրուս կազմված պարահանդէսից 404 ր., պ. Ալեքսանդր Մէլիք-Աղաբանցից 200 ր., «Փորձ» կատարների կուրուսը 100 ր., և Թիֆլիսում բնակւող Հին-Նախիվանցի արհեստաւորներից ու մըշակներից 52 ր., ընդամենը 756 ր., իսկ Սանասարեանցի 1500 ր. գումարի նեւ միասին 2250 րուբլ: Այս գումարը փոխադրված է հեւագրով վան ի սնորհներին սովատանջներին համար կազմված մասնաժողովի:

ՕԳԻՍՏԱՑԻՑ մեզ գրում են փետրվարի 2-ից: «Ամբոստիս Բուրնեան վարդապետը երէկ հասա Օղէսա քաղաքը և հրաւիրում է հայ հասարակութիւնը արդէն ամենքին յայտնի նուիրատուութիւններ անել»:

Ամեն տարի «Մշակը» փոխանակվում էր հետեւեալ տեղական հրատարակութիւնների նեւ: «Кавказъ», «Тифл. Вѣстн.», «Обзоръ», «Тифл. Объявленія», «Մեղու Հայաստանի», «Գրօէքա», «Զլխ» լրագիրների և «Փորձ» ու «Մանկավարժական թերթ» ամսագրիների նեւ: Բացի սորանից մենք փոխադարձապէս ստանում էինք «Донская Пчела» և «Ваканск. Извѣст.» թերթերը: Նոյնպէս «Մշակը» փոխարձակում ուղարկվում էր միշտ «Մասիս» և «Մանգրամէրի Լիֆթես» Կ. Պոլսի լրագիրներին և Եւմիլամիսի «Արարատ» ամսագրին: Իսկ այս տարի զիմեցին մեզ խնդրելով փոխանակել «Մշակը» իրանց թերթերի նեւ հետեւեալ ուսու խմբագրութիւնները՝ «Русскій Курьеръ», «Виленскій Вѣстникъ», «Русская Газета», «Свѣтъ и Тѣнь» և «Мирской Толкъ»: Դա ուրախալի երեւոյթ է, որ մարաքաղաքի ուսու խմբագրութիւնները սկսում են այժմ իրանք խնդրել փոխանակել իրանց հրատարակութիւնները հայոց լրագրի նեւ: Բացի վերե յիշված այդ բոլոր հրատարակութիւններից, որոնք փոխարձակւան են ստացվում, «Մշակի» խմբագրութիւնը ստանում է և քանի մի այլ պարբերական հրատարակութիւններ, ինչպէս «Полось», «Темпс» լրագիրներ և «Unsere Zeit» ամսագրերը:

Ստացանք ՓՈԹԻՈՒՄ բնակվող պ. Կարապետ Պ օպ օվից 1000 րուբլ յօգուտ վանի սովատանջների: Այդ գումարը, որ նուիրել է պ. Պօպով

հասցրած է «Մշակի» խմբագրութեանը Թիֆլիսաբնակ պ. Սողոմոն Բայաջօրովի ձեռքով:

«Русскій Курьеръ» լրագրում կարգում ենք որ երեւելի երգիչներ Թ. Արքու և պ. Պաղիլա, որոնք անցեալ տարի Թիֆլիսում և էլ, այս րօպէիս կոնցերտներ են տալիս Վիլնա քաղաքում:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են, որ այնտեղի քահանաները մի առանձին հաճութեամբ ներկայ են զըտնվում հարուստների թաղման հանդէսին, որովհետեւ գիտեն որ բաւական լաւ կը վարձատրվեն: Իսկ աղքատների թաղմանը ոչ միայն տոճեւեւաններ են գնում, այլ և շատ անգամ զանգ են առնում իրանց պարտականութիւնները: Օրինակ, օրերումս մի աղքատ մարդ վախճանվեցաւ և թաղվեցաւ առանց քահանաների, մի բանի մակների ձեռքով միայն:

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՑ, որ վանի սովատանջների համար ստորագրութիւն է բացված և փող է հաւաքվում: Բացի դորանից, դիտաւորութիւն կայ Ամբոստիս վարդապետի հաւաքած և այստեղ պահված 500 րուբլին ուղարկել Վանի սովանջներին: Սկսված նոր ստորագրութիւնը վերջին գումարի նեւ 1000 րուբլու կը հասնի:

Մեզ գրում են ՄԵՂԻՍ գիւղից, որ այդ գիւղի մէջ մի քանի ժամանակ առաջ նոր դպրոց հիմնելու մասին յուզված խնդրը, այժմ շատ անմխիթար ընթացք է ստացել: Տանուտէրի ընդդիմարութեան և մի քանի պարտնների ինտրիգաների պատճառով ժողովուրդը բոլորովին անտարբեր դարձաւ: Ղէպի դպրոցի հարցը: Գործի այդ տեսակ ընթացքը շատ նպաստաւոր է գիւղի երեք հին ուսուցիչներին, որոնք դարձաւ առաքելով 20—30 անուկներին սուր և խոնար անեականներով փող են վաստակում, սովորեցնելով որդեկաններին սաղման և քերականութիւն հին եզանակով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՍՊԱՆԻԱ

Կորտէսի փետրվարի 6-ին կայացած նիստի միջոցին, գաղթականութիւնների միախառնը, պատասխանելով պ. Ակոստային, յայտնեց, թէ կառավարութիւնը վճնեց, որ այսու հետեւ Կուրան և Պորտօ-Վիկոն կը վախելին մի և նոյն իրաւունքները, ինչպէս որ թերակղզու միւս նահանգները: Պ. Կանսօլասը էլ Կաստիլո յայտնեց, որ նա թողլուութիւն է տուել զենկալ Մարաինէց Կամպոսին, որ նա բոլոր հարկաւոր եղած միջոցները գործընի վերջ զնել Կուրայի պատերազմին: Պորտօ-Վիկոի պատգամաւոր Ակաստո ասաց, որ նա և նրա պաշտօնակիցները հաստատ վըճուել են աշխատել որ և իցէ կերպով ձեռք գցել իրանց ներկայացրած նահանգների համար մի և նոյն օրէնքները, որոնք գործադրվում են սպանիական թերակղզու նահանգներում:

Կառավարութիւնը շարունակաբար կը ներկայացնի Կորտէսին Կուրայի բիւրճէտը և Ֆինանսական պէտք եղած բոլոր փոփոխութիւնները:

Մոլային մինիստրութեան հրտարակած պաշտօնական լուրերից երևում է, որ Ֆիլիպպինական կղզիների մօտ մի կատաղի ուրազան բարձրացել, որին զօհ են զնացել գանազան մեճութեան 25 նաւեր. կործանվող նաւերի թիւում եղել են նոյնպէս և չորս օտարապատկան Ֆիլիպպինացիներ:

Այդ նաւերի վրա գտնվող մարդկերանցից մինչև 46 հոգի խեղդվածներ են հաշուում: Բայց այս ահաջին քանակութեան նաւեր էլ վնասվել են:

Ստէրոի գործը, բժշկների հակասութիւնների շնորհիւ, վեռ անորոշ դրութեան մէջ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ